



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ 18(358) «12» նոյեմբերի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
296	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» ԱՀ կառավարության N 855-Ն որոշումը.....	3
297	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 863-Ն որոշումը.....	6
298	«Արցախի Հանրապետության տեխնիկական կանոնակարգման ոլորտում համակարգող մարմին ճանաչելու և կանոնակարգող մարմինների ցանկը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 864-Ն որոշումը.....	7
299	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 871-Ն որոշումը.....	9
300	«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 26-ի N 234 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 872-Ն որոշումը.....	11

301	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի N 507 որոշման մեջ փոփոխություններ և լրացում ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 282 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 880-Ն որոշումը.....	24
302	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 19-ի N 419-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 888-Ն որոշումը.....	27
303	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 893-Ն որոշումը.....	28
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
304	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ /2265/02/17 որոշումը.....	29
305	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ /1601/02/13 որոշումը.....	40
306	ԱՀ Գերագույն դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ /1074/02/17 որոշումը.....	49

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հոկտեմբերի 2018թ.

N 855-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ վառելիքի ձեռք բերման ու շրջանի սոցիալ-տնտեսական հարցերի լուծման նպատակով Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմին 2018 թվականին հատկացնել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 486100 «Այլ ծախսեր» հոդվածով):

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ հայ լեզենդար աթլետների պատվին Արցախում կազմակերպված հորեյանական մարզական միջոցառումների համար, Արցախի Հանրապետության աթլետիկայի ֆեդերացիային լրացուցիչ տրամադրելու նպատակով, Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությանը 2018 թվականին հատկացնել 2 141 000 (երկու միլիոն հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 463900 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածով):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	-	-	-	-
		2	Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	-	-	-	-
		02	Ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների ձեռքբերում	-	-	-	15 000,0
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	15 000,0
		04	ԱՀ զանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր	-	-	-	(15 000,0)
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	-	(15 000,0)
04			ՏՆՏԵՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	(24 800,0)
	9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(24 800,0)
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(24 800,0)
		02	Նյութական ռեսուրսների ԱՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	-	-	-	(24 800,0)
			ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	-	-	-	(24 800,0)
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶՂԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	-	-	24 800,0
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	-	-	24 800,0
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	-	24 800,0
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	-	-	24 800,0

			ԱՀ կառավարություն	-	-	-	24 800,0
2			Այլ ծախսեր	-	-	-	-
	1		Այլ ծրագրեր	-	-	-	-
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	-	-
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	-	(50 000,0)
			ԱՀ պաշտպանության նախարարություն	-	-	-	50 000,0

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հոկտեմբերի 2018թ.

N 863-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ալ. Հեքիմյան փողոցի թիվ 8բ/62 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,088 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 հոկտեմբերի 2018թ.

N 864-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը և 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Արցախի Հանրապետության տեխնիկական կանոնակարգման ոլորտում համակարգող մարմին ճանաչել Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը:

2. Հաստատել տեխնիկական կանոնակարգման ոլորտում կանոնակարգող մարմինների ցանկը՝ համաձայն հավելվածի:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ց Ա Ն Կ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարություն

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն

Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն

Արցախի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարություն

Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարություն

Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն

Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն

Արցախի Հանրապետության ոստիկանություն

Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայություն

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 հոկտեմբերի 2018թ.

N 871-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ
N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններա իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	4		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	-	7000.0
		1	Ընտանիքի անդամներ և զավակներ	-	-	-	7000.0
		06	Դրամական (նյութական) օգնություն սոցիալապես անապահով քաղաքացիներին և ընտանիքներին	-	-	-	7000.0
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	-	7000.0
	7		Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չչպատկանող)	-	-	-	(7000.0)
		1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	-	-	-	(7000.0)
		01	Վերաբնակիչների և փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ	-	-	-	(7000.0)
			ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն	-	-	-	(7000.0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 հոկտեմբերի 2018թ.

N 872-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՄԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ԾՐԱԳԻՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 234 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱՑ ԸՆԱՍՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» և 10-րդ հոդվածի «գ» կետերով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի «գ» կետով ու 20-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ու մ է:**

1. Սահմանել՝

1) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման ծրագիրը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 26-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը հաստատելու մասին» N 234 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐԲԻՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼ
ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պատրաստման և սվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման հիմնական նպատակն է՝ կատարելագործել նրանց տեսական գիտելիքները և գործնական ունակությունները՝ ուղղված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը, նյութական և մշակութային արժեքների պաշտպանությանը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կայուն գործունեության ապահովմանը:

3. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման հիմնական նպատակը նրանց վարվելակերպի կանոնների իմացությանն ու իրագործմանն ուղղված նվազագույն գիտելիքները փոխանցելն է:

4. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում բնակչության ուսուցման հիմնահարցերն են՝

- 1) իրավունքների, պարտականությունների և վարվելակերպի մասին ուսուցումը.
- 2) պաշտպանության միջոցներից օգտվելու կանոնների մասին ուսուցումը.
- 3) արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման աշխատանքների կատարման հիմունքների ուսուցումը.
- 4) քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման հիմունքների ուսուցումը.
- 5) տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու եղանակների ուսուցումը.
- 6) փրկարարական, վթարային-փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական, հրդեհաշիջման աշխատանքների կատարման հիմունքների ուսուցումը:

**II. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **քաղաքացիական պաշտպանության շտաբ**՝ համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ ստեղծված քաղաքացիական պաշտպանության ղեկավարման մարմին.

2) **կառավարման մարմինների և ուժերի պատրաստում**՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտ-

ներում օպերատիվ և արհեստավարժ գործելու նպատակով մշտապես պատրաստվածության վիճակի ապահովմանն ուղղված գործընթաց.

3) **բնակչության ուսուցում**՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում բնակչությանն անհրաժեշտ նվազագույն գիտելիքների ու վարվելակերպի կանոնների իմացության և օգտագործման ապահովմանն ուղղված գործընթաց.

4) **համալիր ուսումնավարժություն (ՀՈՒԲ)**՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, տարահանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության շտաբների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, փրկարար ուժերի ու բնակչության համատեղ պատրաստման և ուսուցման բարձրագույն ձև:

Համալիր ուսումնավարժության հիմնական էությունը կայանում է նրանում, որ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները ուսումնավարժության ժամանակաընթացքում դրվում են այնպիսի պայմաններում, որոնք առավելագույնս մոտեցված են ռազմական ժամանակաշրջանի իրադրությանը: Համալիր ուսումնավարժությանը ներգրավված ուժերն ու կառավարման մարմինները գործում են մեկ տակտիկական իրադրությունում և լուծում են քաղաքացիական պաշտպանության պլանով նախատեսված խնդիրների ողջ համալիրը:

Համալիր ուսումնավարժությունը թույլ է տալիս գործնականորեն մշակել օբյեկտը խաղաղից ռազմական ժամանակահատվածի անցնելու հարցերի ողջ շրջանակը, ինչպես նաև կազմավորումների կողմից իրենց խնդիրների իրականացման գործողությունները.

5) **հրամանատարաշտաբային ուսումնավարժություն (ՀՇՈՒԲ)**՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, տարահանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության շտաբների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, փրկարար ուժերի ու բնակչության համատեղ պատրաստման և ուսուցման ձև:

Հրամանատարաշտաբային ուսումնավարժության ժամանակ ստուգվում է պլանների իրատեսությունը և գործնականորեն մշակվում է քաղաքացիական պաշտպանության կազմակերպման և վարման ու նրանց համակողմանի ապահովման միջոցառումների ողջ համալիրը, ինչպես նաև ստուգվում է քաղաքացիական պաշտպանության շտաբների և ծառայությունների պատրաստակալությունը միջոցառումների իրականացման ժամանակ ենթակա քաղաքացիական պաշտպանության մարմինների և ուժերի հստակ ու անընդհատ կառավարումը՝ հատկապես հակառակորդի հանկարծակի հարձակման ժամանակ.

6) **շտաբային ուսումնավարժություն (ՇՈՒԲ)**՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, տարահանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության շտաբների ղեկավար կազմի համատեղ պատրաստման ձև:

Շտաբային ուսումնավարժությունը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և շտաբների պատրաստման և ներդաշնակման եղանակներից մեկը և նպատակ ունի քաղաքացիական պաշտպանության շտաբները նախապատրաստել քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորմանը և շտաբային ուսումնավարժության անցկացման ժամանակ կառավարման ապահովմանը.

7) **հատուկ տակտիկական ուսումնավարժություն (ՀՏՈՒԲ)**՝ քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և փրկարար ուժերի պատրաստման ձև:

Ստորաբաժանումների պատրաստությունն իրականացվում է դաշտային վարժվածության հիմք հանդիսացող հատուկ-տակտիկական պատրաստության ընթացքում, որն ապահովում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների (ստորաբաժանումների) մշտական մարտական պատրաստականության պահպանումը: Նրանց ներդաշնակումն իրականացվում է՝

ա. հաշվարկինը, ջոկինը (օղակինը)՝ տակտիկաշարային պարապմունքների ժամանակ,

բ. պահակախմբինը (խմբինը)՝ տակտիկաշարային և հատուկ-տակտիկական պարապմունքների ժամանակ,

գ. ստորաբաժանումներինը՝ տակտիկաշարային ու հատուկ-տակտիկական պարապմունքների, ինչպես նաև հատուկ-տակտիկական ուսումնավարժությունների ժամանակ:

Հատուկ-տակտիկական ուսումնավարժությունների ժամանակ ավարտվում է կազմավորումների պատրաստությունն ու ներդաշնակումը, իսկ ղեկավար և հրամանատարական կազմը, բացի դրանից, ենթակայների ղեկավարման հարցում ստանում է փորձ: Դրանք անցկացվում են համալիր թեմաներով, որոնք ներառում են հարցերի և խնդիրների այն ողջ ծավալը, որոնք լուծվում են կազմավորումների կողմից այն իրադրությունում, որն առավելապես մոտ է հնարավոր ստեղծված իրական իրավիճակին:

8) **ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն (ՅՏՈՒ)**՝ քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և փրկարար ուժերի համատեղ պատրաստման ձև:

9) **օբյեկտային վարժանք (ՕՎ)**՝ կազմակերպությունների ղեկավար կազմի, ծառայությունների, կազմավորումների, կազմակերպության անձնակազմի համատեղ պատրաստման և հնարավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության ուսուցման ձև:

Օբյեկտային վարժանքների ժամանակ քննարկվում և հղկվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության պլաններով նախատեսված միջոցառումների ամբողջ համալիրը: Օբյեկտային վարժանքների անցկացման ընթացքում առաջնահերթ ուշադրություն է դարձվում խաղաղ և ռազմական դրության ժամանակ արտակարգ իրավիճակների դեպքում օբյեկտի անձնակազմի պաշտպանության, ինչպես նաև օբյեկտի գործունեության կայունության ապահովման հարցերին:

10) **դասախոսություն**՝ ուսուցման ձև, որի ընթացքում ուսուցանվողներին ներկայացվում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող իրավական ակտեր, գիտական նյութեր, հարցեր, խնդիրներ, միջազգային փորձ:

11) **սեմինար**՝ ուսուցման ձև, որի ընթացքում ուսուցանվողները՝ համապատասխան ղեկավարի գլխավորությամբ, քննարկում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող հիմնահարցեր:

12) **ինքնուրույն պարապմունք**՝ ուսուցման ձև, որի ընթացքում ուսուցանվողներն ինքնուրույն ուսումնասիրում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող իրավական ակտեր, դիդակտիկ նյութեր, հուշաթերթիկներ, հողվածաշարեր, լսում ու դիտում են հեռուստահաղորդումներ:

III. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Պատրաստման և ուսուցման ձևերն են՝

- 1) համալիր ուսումնավարժություն.
- 2) հրամանատարաշտաբային ուսումնավարժություն.
- 3) շտաբային ուսումնավարժություն.
- 4) հատուկ տակտիկական ուսումնավարժություն.
- 5) ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն.

- 6) օբյեկտային վարժանք.
- 7) դասախոսություն.
- 8) սեմինար.
- 9) ինքնուրույն պարապմունք:

7. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստումն իրականացվում է ուսումնավարժություններին, վարժանքներին, դասախոսություններին, սեմինարներին մասնակցության, ինքնուրույն պարապմունքի, ինչպես նաև դիդակտիկ նյութերի, հուշաթերթիկների, հոդվածաշարերի տրամադրման ու հեռուստահաղորդումների հեռարձակման միջոցով:

8. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցումն իրականացվում է ուսումնավարժություններում, վարժանքներում և դասախոսություններում նրանց ընդգրկման, ինչպես նաև դիդակտիկ նյութերի, հուշաթերթիկների, հոդվածաշարերի տրամադրման ու հեռուստահաղորդումների հեռարձակման միջոցով:

9. Համալիր ուսումնավարժությունների և հրամանատարաշտաբային ուսումնավարժությունների ժամանակ նախատեսվում է խաղարկվող իրավիճակում ուսուցանվողների կողմից ստացված խնդիրներին՝ իրենց գործառնական պարտականություններին համապատասխան, բնակչության և նյութական արժեքների պաշտպանության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, որոշումներ կայացնելը և գործնականորեն դրանք կատարելը:

10. Համալիր ուսումնավարժությունների ընթացքում ուսումնասիրվում են նաև տվյալ ուսումնավարժության մեջ ընդգրկված պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող փաստաթղթերը:

11. Շտաբային ուսումնավարժությունների ժամանակ նախատեսվում է խաղարկվող իրավիճակում ուսուցանվողների կողմից ստացված խնդիրներին՝ իրենց գործառնական պարտականություններին համապատասխան, բնակչության և նյութական արժեքների պաշտպանության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և որոշումներ կայացնելը:

12. Հատուկ տակտիկական ուսումնավարժության և ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության ժամանակ նախատեսվում է խաղարկվող իրավիճակում նախատեսված միջոցառումների գործնական իրականացումը:

13. Օբյեկտային վարժանքի ժամանակ նախատեսվում է խաղարկվող իրավիճակում ուսուցանվողների կողմից ստացված խնդիրներին՝ իրենց գործառնական պարտականություններին համապատասխան, կազմակերպությունների կայուն գործունեության ապահովման և անձնակազմի, հնարավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանության վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, որոշումներ կայացնելը և գործնականորեն դրանք կատարելը:

14. Արցախի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին), ըստ տարվա հիմնական միջոցառումների պլանի, անցկացնում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին վերաբերող միջոցառումներ՝ ընդգրկելով պետական կառավարման մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ ու կազմակերպություններ, արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ, տարահանման հանձնաժողովներ, քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, քաղաքացիական պաշտպանության շտաբներ, քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, փրկարար ուժեր և բնակչությանը:

15. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Արցախի Հանրապետության պետական կառա-

վարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման միջոցառումները կազմակերպում և համակարգում է լիազորված մարմինը:

16. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, յուրաքանչյուր տարի մինչև դեկտեմբերի 20-ը լիազորված մարմնի հետ համաձայնեցնում և հաստատում են արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող հիմնական միջոցառումների հաջորդ տարվա պլանը՝

1) պետական կառավարման հանրապետական մարմինները՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներին առնչվող հիմնական միջոցառումների հաջորդ տարվա պլանը:

2) պետական կառավարման տարածքային մարմինները և Ստեփանակերտի քաղաքապետարանը՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման հիմնական միջոցառումների հաջորդ տարվա պլանը:

17. Պլաններում ներառվում են միջոցառումների անվանումները, թեմաները, կատարման ժամկետները, պատասխանատուները, կատարողները և մասնակիցները (տեղական ինքնակառավարման մարմիններ ու կազմակերպություններ, արտակարգ իրավիճակների հանձնաժողովներ, տարահանման հանձնաժողովներ, քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, քաղաքացիական պաշտպանության շտաբներ, քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, փրկարար ուժեր և բնակչություն):

18. Արցախի Հանրապետության պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման գործընթացը, համաձայն համապատասխան հիմնական միջոցառումների պլանի, իրականացնում են համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետերը:

19. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունները լիազորված մարմնի համապատասխան տարածքային ստորաբաժանում են ներկայացնում ամփոփ տեղեկանք (*գրավոր վերլուծություն*) անցկացված ուսումնավարժության արդյունքների մասին:

20. Ուսումնավարժություններում, վարժանքներում, դասախոսություններում և սեմինարներում ներգրավվող մարմիններն ու անձնակազմն ընտրվում են միջոցառումն անցկացնող մարմնի ղեկավարի կողմից՝ ելնելով միջոցառման թեմայից և նպատակներից:

21. Արցախի Հանրապետության պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմիններն ու կազմակերպությունները կարող են ընդգրկվել նաև Արցախի Հանրապետության զինված ուժերի, Արցախի Հանրապետության ոստիկանության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, այլ գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների կողմից, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հարցերին վերաբերող թեմաներով միջոցառումներին՝ այդ մարմինների կողմից առաջարկվող ձևաչափով:

22. Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի կառավարման մարմինների վերապատրաստումն անցկացվում է լիազորված մարմնի կողմից: Վերապատրաստումը կարող է անցկացվել լիազոր մարմնի գտնվելու վայրում և (կամ) համապատասխան շրջկենտրոններում՝ ելնելով վերապատրաստման ենթակա կառավարման մարմինների վարչատարածքային տեղաբաշխվածությունից:

23. Պատրաստումը և ուսուցումը կազմակերպվում են՝

- 1) աշխատանքից կտրված.
- 2) աշխատանքից չկտրված:

24. Բնակչության ինքնուրույն պատրաստությունն իրականացվում է ինքնուրույն՝ ուսումնասիրելով դիդակտիկ նյութեր, հուշաթերթիկներ, հոդվածաշարեր, լսելով ու դիտելով հեռուստահաղորդումներ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր


**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՐՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՏԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ
ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼ ՈՒՐՈՐՏՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ**


1. Համալիր ուսումնավարություն

Անցկացնող մարմինը՝ լիազորված մարմին Անցկացման ժամկետը և տևողությունը՝ ԱՀ ՔՊ պետի որոշմամբ							
ԱՀ պետական կառավարման մարմիններ	ԱԲ հանձնաժողով- ներ, տարահանման հանձնաժողովներ	ՔՊ շտաբներ	ՔՊ ծառայու- թյունների պետեր	ԱՀ տեղական ինքնակա- ռավարման մարմիններ և կազմակերպություն- ներ	ՔՊ կազմա- վորումներ	Փրկարարա- կան ուժեր	Բնակչություն



Անցկացնող մարմինը՝ ԱՀ տեղական ինքնակառավարման մարմիններ (որոնց տարածքում տվյալ տարվա ընթացքում լիազորված մարմնի կողմից չի անցկացվել ՀՈՒ) Անցկացման ժամկետը և տևողությունը՝ 3 տարին 1 անգամ՝ 2-3 օր տևողությամբ						
ԱՀ տեղական ինքնակառավարման մարմիններ	ԱԲ հանձնաժողով- ներ, տարահանման հանձնաժողովներ	ՔՊ շտաբներ	ՔՊ ծառայու- թյունների պետեր	Կազմակերպու- թյուններ	ՔՊ կազմա- վորումներ	Բնակչություն



2. Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն







3. Շտաբային ուսումնավարժություն






4. Հատուկ-տակտիկական ուսումնավարժություն







5. Ցուցադրական-հատուկ տակտիկական ուսումնավարժություն



6. Օբյեկտային վարժանք



7. Դասախոսություններ, սեմինարներ, ինքնուրույն պատրաստություն



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՂՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 նոյեմբերի 2018թ.

N 880-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 507 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԱՂՐԻԼԻ 15-Ի N 282 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 21-ի «Տուժած անձանց արտադրական խեղման, մասնագիտական հիվանդության, ռազմաճակատում գտնվելու, զինվորական ծառայության և այլ հանգամանքների հետ մահվան պատճառական կապը որոշելու կարգը հաստատելու մասին» N 507 որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) 2-րդ կետի 1-ին նախադասությունում «որոշում են մահացածի վերջին հաշվառման վայրն սպասարկող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության տարածքային մարմինը (այսուհետ՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողով) և կառուցվածքային ստորաբաժանումը» բառերը փոխարինել «որոշում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնը՝ բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) ու փորձաքննական և վերականգնողական ծրագրերի բաժնի միջոցով» բառերով, 2-րդ նախադասությունում «ժամանակ» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքները վերացնելու աշխատանքներին մասնակցած զինծառայողի)» բառերով, 3-րդ նախադասությունից հանել «բժշկասոցիալական փորձաքննական» բառերը, իսկ «դ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) տարած հիվանդությունների, կրած վնասվածքների և խեղումների փաստը հավաստող կամ ռազմաբժշկական փաստաթղթերից մեկը, կամ զինվորական կոմիսարիատի տված տեղեկանքը 1986 թվականի ապրիլի 26-ից մինչև 1987 թվականի դեկտեմբերի 31-ը Չեռնոբիլի ատոմային էլեկտրակայանի վթարի հետևանքների վերացման աշխատանքների կատարման ժամանակ զինվորական ծառայողական պարտականությունները կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության

«Ճառագայթային բժշկության և այրվածքների գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (նախկինում՝ բժշկական ճառագայթաբանության գիտահետազոտական ինստիտուտ) տված փաստաթուղթը կամ միջգերատեսչական փորձաքննության խորհրդի եզրակացությունը հիվանդության պատճառական կապի մասին».

2) 3-րդ կետում «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովի ղեկավարն» բառերը փոխարինել «Հանձնաժողովի նախագահն» բառերով.

3) 4-6-րդ կետերից հանել «բժշկասոցիալական փորձաքննական» բառերը.

4) 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն, որը կառուցվածքային ստորաբաժանման» բառերը փոխարինել «նախարարության բժշկասոցիալական փորձաքննության կենտրոն, որը փորձաքննական և վերականգնողական ծրագրերի բաժնի» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության բժշկասոցիալական փորձաքննության կենտրոն ստեղծելու, կենտրոնի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 282 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում, 1-2-րդ կետերում, որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի վերնագրում, 2-րդ կետում, որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի վերնագրում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի՝

ա. 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության (այսուհետ՝ նախարարություն)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնը (այսուհետ՝ կենտրոն) նախարարության» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը՝ «Արցախի Հանրապետության» բառերով,

բ. 2-6-րդ, 8-րդ, 11-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

գ. 8-րդ կետի «ա» ենթակետից հանել «և վաղեմության ժամկետը» բառերը,

դ. 8-րդ կետի «գ» ենթակետից հանել «, իրավապահ, ինչպես նաև այլ շահագրգիռ մարմինների հարցման դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի տոկոսը» բառերը,

ե. 8-րդ կետի «ը» ենթակետում «կազմակերպություններին» բառից հետո լրացնել «զբաղվածության գործակալությանը» բառերը, իսկ «սոցիալական ծառայությունների տարածքային մարմիններին» բառերը փոխարինել «նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններին» բառերով,

գ. 8-րդ կետի «Ժգ» ենթակետում «տեղավորելու» բառից հետո լրացնել «(համաձայն կենտրոնի տված երաշխավորագրերի)» բառերը,

է. 13-րդ կետի «գ» ենթակետում «հանձնարարականներ» բառից հետո լրացնել «, առանց լիազորագրի հանդես է գալիս կենտրոնի անունից, ինչպես նաև տալիս է կենտրոնի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2018թ.

N 888-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 419-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է**:

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 19-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 29-ի N 444 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 419-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման՝

ա. նախաբանում «188» թիվը փոխարինել «189» թվով,

բ. ուժը կորցրած ճանաչել 8-րդ կետը.

2) որոշմամբ հաստատված կարգի՝

ա. 7-րդ կետում «188-րդ հոդվածի 5-րդ կետի» բառերը փոխարինել «189-րդ հոդվածի 5-րդ մասի» բառերով,

բ. 8-րդ կետում և 46-րդ կետի 1-ին ենթակետում «188» թիվը փոխարինել «189» թվով,

գ. 34-րդ կետի 4-րդ ենթակետում «188-րդ հոդվածի 5-րդ կետով» բառերը փոխարինել «189-րդ հոդվածի 5-րդ մասով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 նոյեմբերի 2018թ.

N 893-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք յ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Դ. Բեկ փողոցի թիվ 52/2 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,01419 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Քաղաքացիական գործ ԸԻԴ/2265/02/17
Քաղաքացիական գործ ԸԻԴ/2265/02/17
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան
 Կ.Սաղյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

16-ին հոկտեմբերի 2018թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր՝	Գ.Գրիգորյանի,
մասնակցությամբ՝ դատավորներ՝	Հ.Աբրահամյանի,
	Ա.Աբրահամյանի,
	Հ.Խաչատրյանի,
	Կ.Ղարայանի,

քննարկելով ըստ հայցի Ռոբերտ Ալբերտի Նավասարդյանի ընդդեմ Ռուբեն Ալեքսանդրի Մանգասարովի՝ անշարժ գույքը տիրագործի ճանաչելու և տիրապետող անձի սեփականության իրավունքը ճանաչելու և ըստ հայցի Նորա Գրիգորիի Նավասարդյանի ընդդեմ Ռոբերտ Ալբերտի Նավասարդյանի և Ռուբեն Ալեքսանդրի Մանգասարովի՝ գույքը տիրագործի ճանաչելու և տիրապետող անձի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի վերաբերյալ ԸԻԴ/2265/02/17 քաղաքացիական գործով ԱՀ վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ երրորդ անձ Ն.Նավասարդյանի բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2017 թվականի հուլիսի 10-ին Ռոբերտ Ալբերտի Նավասարդյանն (այսուհետ, նաև՝ Հայցվոր) ընդդեմ Ռուբեն Ալեքսանդրի Մանգասարովի (այսուհետ, նաև՝ Պատասխանող) հայցադիմում է ներկայացրել ԱՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ Առաջին աստիճանի

դատարան)՝ խնդրելով Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան 1-ին նրբանցքի թիվ 36 հասցեում գտնվող 177.58 քմ մակերեսով բնակելի տունն ու 600 քմ մակերեսով հողամասը (այսուհետ՝ Բնակելի տուն) ճանաչել տիրագուրկ և դրա նկատմամբ ճանաչել իր՝ որպես տիրապետող անձի, սեփականության իրավունքը:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հուլիսի 11-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի սեպտեմբերի 01-ի որոշմամբ հրավիրվել է նախնական դատական նիստ:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի հոկտեմբերի 05-ի որոշմամբ Արեգա Վյաչեսլավի Նավասարդյանը, Ալբերտ Ռոբերտի Նավասարդյանը, Տիգրան Ռոբերտի Նավասարդյանը, Ջոյա Ռոբերտի Նավասարդյանը և Նորա Գրիգորիի Նավասարդյանը ներգրավվել են որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ Հայցվորի կողմում:

2017 թվականի դեկտեմբերի 05-ին երրորդ անձ Նորա Գրիգորիի Նավասարդյանը (այսուհետ, նաև՝ Երրորդ անձ) «հակընդդեմ հայց» վերտառությամբ հայցադիմում է ներկայացրել Առաջին ատյանի դատարան ընդդեմ Հայցվորի և Պատասխանողի, խնդրելով Բնակելի տունը ճանաչել տիրագուրկ և դրա նկատմամբ ճանաչել իր՝ որպես տիրապետող անձի, սեփականության իրավունքը:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 06-ի որոշմամբ Երրորդ անձի ներկայացրած հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հունվարի 11-ի որոշմամբ քաղաքացիական գործը նշանակվել է դատական քննության:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի մարտի 30-ի վճռով ներկայացված հայցերը բավարարվել են մասնակի՝ Բնակելի տունը ճանաչվել է տիրագուրկ, իսկ Հայցվորը և Երրորդ անձը ճանաչվել են Բնակելի տան 1/2 -ական մասի նկատմամբ սեփականատերեր:

Նշված վճռի դեմ 2018 թվականի մայիսի 02-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել Հայցվորն ու Արեգա, Ալբերտ, Տիգրան, Ջոյա Նավասարդյանները:

ԱՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ, նաև՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի մայիսի 14-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 29-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, վճիռը մասնակիորեն բեկանվել. Հայցվորի հայցը բավարարվել է, իսկ Երրորդ անձինք՝ Բնակելի տան նկատմամբ իր, որպես տիրապետող անձի, սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասով, մերժվել:

Նշված որոշման դեմ 2018 թվականի հուլիսի 24-ին Երրորդ անձը ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը

բեկանելու և Առաջին աստիճանի դատարանի 2018 թվականի մարտի 30-ի վճռին օրինական ուժ տալու խնդրանքով:

Պերագույն դատարանի 2018 թվականի օգոստոսի 23-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ, 229-րդ, 230.2-րդ, 230.3-րդ, 230.4-րդ, 231-րդ և ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածների պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերի՝ իր և Ալբերտ Նավասարդյանի ամուսնությունը գրանցվել է ՔԿԱԳ մարմնում՝ 1969թ. փետրվարի 21-ին: 1988 թվականին ամուսիններով տեղափոխվել են Ստեփանակերտ քաղաք և Ռուբեն Մանգասարովից փաստացի գնել դեռևս ամբողջովին չկառուցված Բնակելի տունը: Իրեն անհայտ պատճառներով տան ձևակերպման աշխատանքներն ավարտին չեն հասցվել, սակայն իրենց միջոցներով Բնակելի տունը հասցվել է ավարտական տեսքի և կահավորվել: Հայցվորը Բնակելի տանը հաշվառվել է 1991 թվականին: Երկար տարիներ ապրել են միևնույն հարկի տակ և միայն այն ժամանակ, երբ առողջական վիճակով պայմանավորված այլևս չի կարողացել մշակել տնամերձ հողամասը և այդ նպատակով հրավիրել է վարձու աշխատողի, իրենց միջև ձևավորվել են անբարյացակամ հարաբերություններ:

Ըստ բողոքաբերի՝ երբ 2006 թվականին կատարվել են Բնակելի տան վերանորոգման աշխատանքները, դրանց իր մասնակցությունն է ցուցաբերել նաև ինքն իր ամուսնու հետ միասին, ինչը հաստատել են գործով ցուցմունք տված վկաները: Սակայն, Վերաքննիչ դատարանն անհիմն եզրահանգել է, թե այդ աշխատանքները կատարվել են միայն Հայցվորի կողմից: Ինչ վերաբերում է կոմունալ վճարներին, ապա դրանք իրոք կատարում է Հայցվորը, բայց այն պատճառով, որ իրենք ապրում էին որպես մեկ ընտանիք: Ավելին, ինքը միշտ գումար է առաջարկել Հայցվորին, սակայն վերջինս չէր ընդունում և դա չի կարող դիտարկվել, իբրև թե ինքը հոգ չի տարել տան նկատմամբ, կամ որպես սեփականն այն չի տիրապետել:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանի դիրքորոշումն այն մասին, թե Բնակելի տանը բնակվելը չի կարող համարվել որպես տիրապետում, ընդունելի է, սակայն ինքը՝ Բնակելի տունը գնելու պահից, իրեն համարել է տան սեփականատեր, հոգ է տարել տան նկատմամբ, նորոգման

աշխատանքներ է կատարել, կահավորել այն, պահպանել երրորդ անձանց ունեցություններից և այլն: Այդ ամենը կատարել է ամուսնու հետ մեկտեղ, քանի որ նա էլ էր իրեն համարում տան սեփականատեր: Հայցվորը նույնպես իր ցուցմունքում նշել է, որ իրեն տան տեր է համարել միայն հոր մահից հետո:

Վերոգրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 29-ի որոշումը և օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի մարտի 30-ի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1) Ալբերտ Տիրանի Նավասարդյանը և Երրորդ անձն ամուսնացել են 1969թ. փետրվարի 21-ին:

2) 01.06.1988թ. պայմանագրով Ռուբեն Ալեքսանդրի Մանգասարովը վաճառել, իսկ Ալբերտ Տիրանի Նավասարդյանը գնել է Ստեփանակերտ քաղաքի Բաղրամյան նրբանցք 18 (ներկայիս 36) հասցեում գտնվող երկհարկանի հինգ սենյականոց բնակելի տունը՝ 95 քառ. մետր բնակելի մակերեսով, իսկ վաճառված տան դիմաց Ռուբեն Ալեքսանդրի Մանգասարովը պայմանագիրը կնքելու պահին ստացել է Ալբերտ Նավասարդյանից 9.400 ռուբլի: Նշված պայմանագիրը չի ստացել պետական գրանցում:

3) Ռուբեն Մանգասարովին պատկանող վիճարկվող տան բնակելի մակերեսը կազմում է 102.82 քառ. մետր, ընդհանուր օգտակար մակերեսը 177.58 քառ. մետր, հողամասի մակերեսը՝ 600 քառ. մետր:

4) Ձեռք բերված բնակելի տունն ավարտական տեսքի է բերվել Նավասարդյանների ընտանիքի կողմից, իսկ 2006 թվականին իրականացվել են վերանորոգման աշխատանքներ:

5) Բնակելի տան սպասարկման և կոմունալ վճարները կատարվել են Հայցվորի կողմից:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործի շրջանակներում քննարկվում է երկու պահանջ՝ գույքը տիրագուրկ ճանաչելու և դրա նկատմամբ տիրապետող անձի (անձանց) սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ: Ընդ որում, գույքը տիրագուրկ ճանաչելու և հայցվոր Ռուբերտ Նավասարդյանի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշումները բողոքարկման առարկա չեն դարձել: Այդ պատճառով Գերագույն դատարանն անդրադառնում է միայն երրորդ անձ Նորա Նավասարդյանի կողմից ձեռքբերման վաղեմության ինստիտուտի իրավակարգավորումների վերաբերյալ ստորադաս դատարանների կատարած մեկնաբանման իրավաչափությանը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն այն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Գերագույն դատարանն արդեն իսկ իր նախկինում կայացրած որոշումներում արձանագրել է, որ ձեռքբերման վաղեմությունն իրենից ներկայացնում է օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից այդ իրավունքի դադարման միջոց: Այսինքն, ձեռքբերման վաղեմության ինստիտուտի նպատակն է՝ իրավաբանական նշանակություն տալ փաստացի գոյություն ունեցող հարաբերություններին՝ քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման նպատակով (տե՛ս, օրինակ՝ ԸԲԴ/1247/02/11 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2012 թվականի մարտի 28-ի որոշումը):

Այնուհանդերձ, Գերագույն դատարանն գտնում է, որ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքը ճանաչելու պահանջներով գործերի առավել ճիշտ քննության և լիարժեք լուծումներ տալու առումով առկա է իրավունքի զարգացման խնդիր, մասնավորապես՝ կապված տիրապետման ժամկետի անընդմեջության, այն արձանագրելու պահի, ինչպես նաև ընտանիքի անդամների կողմից բնակելի տան տիրապետման եղանակների իրավական նշանակության գնահատման հարցերի հետ: Հետևաբար, զարգացնելով նախկինում արված եզրահանգումները, Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում արձանագրել, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել «տիրապետում» օրենսդրական եզրույթին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ տիրապետման կարևորագույն հատկանիշը հանդիսանում է նրա սոցիալական ճանաչողությունը: Անկողմնակալ դիտորդի համար օբյեկտիվորեն հնարավոր է լինում արձանագրել, որ տվյալ անշարժ գույքը գտնվում է տիրապետության ներքո, իսկ անհրաժեշտ բարենպաստ դեպքերում, նաև հետևություն անել կոնկրետ տիրապետողի վերաբերյալ: Նման հետևության համար հիմք են հանդիսանում տարբեր գործոնների սոցիալական գնահատականը: Դրանց մեջ հիմնականը հանդիսանում է գույքի նշանակությունը: Եթե շրջապատողները դիտարկման պրոցեսում տեսնում են, որ գույքը գտնվում է այնպիսի վիճակում, որոնցում գտնվում են համանման գույքերն իրենց սովորական, առօրյա օգտագործման ընթացքում, ինչպես արտադրական, այնպես էլ անձնական նկատառումներով, ապա նրանք հետևություն են անում, որ այդ գույքը գտնվում է անձի տիրապետության ներքո:

Տիրապետողի վարքագիծը գույքի նկատմամբ նույնպես պետք է մատչելի լինի սոցիալական գնահատականի համար: Եթե անձը դրսևորում է այնպիսի վարքագիծ, ինչպիսին դրսևորում են համանման գույք տիրապետող անձինք, ապա այդպիսի գույքը շրջապատողների համար դիտարկվում է որպես անձի տիրապետման ներքո գտնվող:

Մակայն տիրապետումն ինքնին՝ որպես փաստացի գործողություն, ձեռքբերման վաղեմության ինստիտուտի համատեքստում իրավական արժեք է ստանում միայն որոշակի վավերապայմանների առկայության պարագայում: Հաշվի առնելով նշված ինստիտուտի բնութագրական նշանակությունն ու դերը, օրենսդիրը տիրապետման հետ միաժամակ սահմանել է ևս հինգ լրացուցիչ պահանջներ.

Առաջինը վերաբերում է տիրապետման բարեխղճությանը: Նշված հոդվածը, ինչպես նաև ԱՀ քաղաքացիական օրենսգիրքը չի տալիս բարեխղճության հասկացությունը: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այն ունի իր ինքնուրույն բովանդակությունը: Տիրապետման բարեխղճությունը գնահատվում է գույքն անձի փաստացի տիրապետմանն անցնելիս: Գույքն անձի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողի մոտ պետք է առկա լինի այն համոզմունքը, որ գույքը ձեռք է բերում օրինական հիմքերով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմքեր ենթադրելու, որ նա այդ գույքը տիրապետում է որպես սեփական:

Երկրորդ պահանջը այն է, որ տիրապետողը պետք է «գույքը տիրապետի որպես սեփական»: Այսինքն, տիրապետման հավակնողը պետք է մասնակցի գույքի կառավարմանը, հոգ տանի դրա պահպանման համար, երրորդ անձանց հետ հարաբերություններում պաշտպանի գույքը, որպես իր սեփականը:

Երրորդ պահանջը վերաբերում է տիրապետման բացահայտ լինելուն, այսինքն՝ շրջապատողները պետք է հնարավորություն ունենան հետևելու տիրապետողի վարքագծին: Տիրապետողի կողմից տիրապետումը թաքցնելը հանդիսանում է նշված պահանջի խախտում: Չնայած դրան, այս պահանջից չի բխում, որ տիրապետողը պարտավոր է հատուկ շրջապատին տեղեկացնել տիրապետման գոյության մասին:

Չորրորդ պահանջը հանդիսանում է տիրապետման անընդհատությունը, այսինքն տիրապետումը, որպեսզի հասցվի այնպիսի անհետադարձ և ցանկալի հետևանքի, ինչպիսին սեփականության իրավունքի ծագումն է, պետք է գոյություն ունենա անընդմեջ՝ ամբողջ ժամանակահատվածում: Տիրապետումը, որ մեկ ծագում է, մեկ դադարում, չի ստեղծում սեփականության իրավունք: Տիրապետման հավակնողը սկզբունքորեն պետք է ապացուցի, որ ամբողջ ժամանակահատվածում հանդիսացել է գույքի տիրապետողը:

Բացի նշվածներից, անկյունաքարային է հանդիսանում տիրապետման երկարատևությունը: Անշարժ գույքի համար այն սահմանված է 10 տարի: Տիրապետման երկարատևությունը շրջապատողների համար օրինականացնում

է այն: Օրենքը չի կապում կարճաժամկետ խզումը տիրապետման և սեփականության իրավունքի միջև այնպիսի անդառնալի հետևանքի, ինչպիսին սեփականության իրավունքի ձեռքբերումն է: Պոտենցիալ ձեռքբերողին հնարավորություն է տրվում ժամկետի միացում կատարել, այսինքն տվյալ գույքը որոշ ժամանակահատվածում տիրապետել է այլ անձ, այնուհետև այն անցել է այլ անձի, որն իրավունք ունի տիրապետման ժամկետին միացնել նախկին տիրապետման ժամանակահատվածը: Ժամկետի ընթացքը սկսվում է տիրապետման ծագման պահից:

Ըստ էության, օրենքով նախատեսված տասը տարվա ժամանակահատվածն այն սահմանափակ ժամանակահատվածն է, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ գործողությունները կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեխղճության վրա, քանի որ այս իրավահարաբերության համար էական է անշարժ գույքի սեփականատիրոջ վերաբերմունքը նման տիրապետման վերաբերյալ, որովհետև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի կիրառման առումով սեփականատիրոջ կողմից գույքի տիրապետման իրավագործության իրականացումն ինքնին բացառում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչում որևէ սուբյեկտի համար:

Սակայն, նշվածը չի ենթադրում, որ ձեռքբերման վաղեմության իրավունքի ուժով սեփականության իրավունքի ճանաչում հնարավոր է նաև այն դեպքերում, երբ անձը՝ տասնամյա ժամկետի ավարտից հետո դադարեցրել է գույքի փաստացի տիրապետումը: Ինչպես բխում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի «տիրապետում է» ձևակերպումից, անհրաժեշտ է, որպեսզի օրենքով սահմանված և սույն որոշմամբ բացահայտված վավերապայմաններն առկա լինեն նաև իր (իրենց) իրավունքների պաշտպանության նպատակով անձի (անձանց) կողմից դատարան հայց ներկայացնելու պահին:

Նետևաբար, դատարաններն անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնեն անշարժ գույքի տիրապետման ժամանակահատվածի անընդմեջությանը երկու առումով՝ օրենքով սահմանված նվազագույն՝ տասնամյա ժամանակահատվածը պահպանված լինելու, և դրանից հետո դատարան դիմելու պահի շրջանակներում: Ընդ որում, դրանցից առաջինը կարևոր է անշարժ գույքի սեփականատիրոջ և փաստացի տիրապետողի, իսկ երկրորդը՝ միայն անշարժ գույքը տիրապետողի վարքագծին իրավական գնահատական տալու համար:

Ինչ վերաբերում է ձեռքբերման վաղեմության ինստիտուտից օգտվել ցանկացող սուբյեկտների շարքում ընտանեկան հարաբերություններով շաղկապված մի քանի անձանց մասնակցությամբ վարույթներին, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ստորև նշվածները.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով նախատեսված

կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, իսկ այս կամ այն հանգամանքի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումը պետք է լինի կոնկրետ գործով ձեռք բերված բոլոր թույլատրելի և վերաբերելի ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման անմիջական և տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նշվածներն արտաձեղով ձեռքբերման վաղեմության իրավունքի ճանաչման պահանջով գործերի վրա, Գերագույն դատարանն արձանագրում է, որ հակադիր շահերով օժտված երկու դատավարական կողմերի միջև ապացուցման բեռը բաշխված է հետևյալ կերպ՝ հայցվորը (կամ՝ հայցվորները) պետք է ապացուցի, որ անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, իսկ Պատասխանողը, որ պատշաճ գործողություններ է ձեռնարկել իր սեփականության իրավունքից հրաժարում չարձանագրելու առումով: Ընդ որում, անհրաժեշտ է տարբերակված մոտեցում ցուցաբերել այն դեպքերում, երբ հայցվորի դերում հանդես են գալիս միևնույն ընտանիքի անդամները: Վերջիններս, միմյանց հետ գտնվելով ընտանեկան և գույքային շահերով փոխադարձ կապվածության և կախվածության մեջ, իրականացնում են միասնական նպատակ հետապնդող փոխադարձ համաձայնեցված գործողություններ: Ուստի, նրանցից մեկի կողմից անշարժ գույքի փաստացի տիրապետությամբ իրականացված գործողությունները կարելի է համարել ընդհանուրի՝ համատեղ կամահայտնությամբ և լռելյայն համաձայնությամբ իրականացված գործողություններ:

Ի մի բերելով նշվածները, Գերագույն դատարանը գտնում է, որ այն դեպքերում, երբ ձեռքբերման վաղեմության ինստիտուտից օգտվել ցանկացող ընտանիքի անդամները հանդիսանում են համահայցվորներ և գործով

ապացուցվում են անշարժ գույքը տիրապետելու սույն որոշմամբ արձանագրված բոլոր վավերապայմանները՝ թեկուզ ընտանիքի մեկ անդամի կողմից, ապա գործում է ընտանիքի բոլոր անդամների կողմից գույքը տիրապետած լինելու կանխավարկածը: Վերջինս հիմք է ընտանիքի բոլոր անդամների ընդհանուր համատեղ սեփականությունը ճանաչելու համար: Մյուս բոլոր տարբերակներում, յուրաքանչյուր ոք, անկախ ընտանիքի անդամ հանդիսանալու փաստից, պետք է ինքնուրույն ապացուցի անշարժ գույքը տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ որպես սեփականը տիրապետած լինելու իր պնդումը:

Նշվածների համատեքստում դիտարկելով ստորադաս դատարանների դատական ակտերը, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործով Վերաքննիչ դատարանը գտել է, որ. «... գործով չկան ապացույցներ, որոնցով կարող է հաստատվել, որ Նորա Նավասարդյանը վեճի առարկա տունը՝ իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփական գույք, իսկ 1988 թվականից առայսօր վիճարկվող տանը գուտ բնակվելու հանգամանքը դեռևս չի ենթադրում գույքի ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռք բերման համար անհրաժեշտ՝ փաստացի տիրապետողի կողմից գույքը որպես սեփականը տիրապետելու, գույքի կառավարմանը մասնակցելու, դրա պահպանման համար հոգ տանելու վավերապայմանի առկայությունը»:

Իր համաձայնությունը հայտնելով հանդերձ Վերաքննիչ դատարանի գնահատողական եզրահանգման իրավաչափությանը՝ կապված բնակելի տանը բնակվելու բուն փաստն ինքնին ձեռքբերման վաղեմության ինստիտուտի շրջանակներում դիտարկվող «տիրապետում» հասկացության հետ նույնացնելու անհնարինության վերաբերյալ, Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում ամրագրել, որ Երրորդ անձի դրսևորած վարքագիծը չի գնահատվել սույն որոշմամբ «ընտանիքի անդամ հանդիսացող անձի կողմից անշարժ գույքի տիրապետում» և «մինչև դատարան դիմելու պահը տիրապետման անընդմեջություն» հասկացությունների տեսանկյունից:

Այսպիսով, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները չեն պարզվել ու չեն գնահատվել, հետևաբար՝ հիմնավոր են վճռաբեկ բողոքի փաստարկները ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները ստորադաս դատարանների կողմից խախտելու մասին:

Իր հերթին, Առաջին ատյանի դատարանը, Բնակելի տան նկատմամբ ճանաչելով Հայցվորի և Երրորդ անձի բաժնային սեփականության իրավունքը, որևէ կերպ չի պատճառաբանել, թե Երրորդ անձի մասով իրականացված որ ինքնուրույն գործողություններն են դիտարկվել որպես ձեռքբերման վաղեմության ինստիտուտի շրջանակներում նախատեսված «տիրապետում»:

Գերագույն դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Գերագույն դատարանը նշել է, որ դատաքննության դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական հիմնավորումը:

Որոշման իրավական հիմնավորումը կայանում է հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրության և կիրառման մեջ, այն նորմի /նորմերի/, որի հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Որոշման մեջ ոչ միայն պետք է ցույց տալ նորմատիվ ակտի այս կամ այն հոդվածը, որում ամրացված է կիրառման ենթակա նորմը, այլ պետք է պատճառաբանվի, թե հատկապես ինչու պետք է կիրառվի հենց այդ նորմը:

Որոշման իրավական հիմնավորումը բնութագրում է ինչպես դատարանի, այնպես էլ նրա որոշման իրավակիրառ գործառույթը, ընդգծում դատական գործունեության և դատական որոշման օրինականությունը (տե՛ս, օրինակ՝ ԸԻԴ/1510/02/15 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2016 թվականի օգոստոսի 05-ի որոշումը):

Միաժամանակ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ դատարանը պետք է նշի ոչ միայն այն ապացույցները, որոնց վրա հիմնվել է վիճելի փաստերը հաստատելիս և արդյունքում որոշում կայացնելիս, այլև պետք է պատճառաբանի, թե ինչու է կողմի ներկայացրած այս կամ այն ապացույցը մերժվում: Միայն նման հիմնավորումը կարող է վկայել գործի բազմակողմանի հետազոտության մասին:

Նշվածներից բխում է, որ Առաջին ասյանի դատարանի 2018 թվականի մարտի 30-ի վճռին օրինական ուժ տալու վերաբերյալ բողոքաբերի պահանջը բավարարվել չի կարող, ուստի՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված Գերագույն դատարանի լիազորությունը, որի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանն՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Ընդ որում, գործի նոր քննությունն անհրաժեշտ է գնահատել գործով ձեռք բերված ապացույցները՝ սույն որոշմամբ արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո և երրորդ անձ Ն.Նավասարդյանի ձեռքբերման վաղեմության ինստիտուտից օգտվելու հնարավորության համատեքստում, դրա հետ կապված՝ լուծում տալով հայցվոր Ռոբերտ Նավասարդյանի, իսկ անհրաժեշտության դեպքում, նաև նրա ընտանիքի մյուս անդամների, համապատասխանաբար՝ անձնական կամ համատեղ սեփականության ճանաչման հարցերին և կայացնել օրինական, հիմնավորված և պատճառաբանված վճիռ:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վեճը վերջնական լուծում չի ստացել, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի բաշխման հարցին անհրաժեշտ է անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 29-ի որոշումը մասնակիորեն՝ տիրապետող անձի սեփականության իրավունքի ճանաչման պահանջի մասով, բեկանել, և այդ մասով գործն ուղարկել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան՝ նոր քննության:

Որոշումը մնացած մասով թողնել անփոփոխ:

2. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքներով:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հ.ԱԲՐԱՀԱՄԼՅԱՆ
Ա.ԱԲՐԱՀԱՍՅԱՆ
Հ.ԽԱՉԱՏՏՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**

Առաջին ատյանի դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել քաղաքացիական գործ:

Կայծեր և Անահիտ Բաբայաններն ընդդեմ Լաուրա Վարդանյանի 2013 թվականի նոյեմբերի 15-ին ներկայացրել են հակընդդեմ հայց՝ առանձնատան ու տնամերձ հողամասի բարելավման համար կատարված 3.100.000 ՀՀ դրամի չափով ծախսերը գանձելու մասին պահանջով:

Գործի քննության արդյունքներով Առաջին ատյանի դատարանի /դատավոր Ա.Ամիրջանյան/ 2016 թվականի դեկտեմբերի 27-ին կայացրած վճռով սկզբնական հայցը բավարարվել է ամբողջությամբ, իսկ հակընդդեմ հայցը՝ մասնակի:

Նշված վճռի դեմ հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մադաթյանի կողմից բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետև՝ Վերաքննիչ դատարան/ 2017 թվականի մարտի 07-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և Առաջին ատյանի դատարանի վճիռը թողնվել օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ ներկայացված հայցվոր /հակընդդեմ պատասխանող/ Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մադաթյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում Գերագույն դատարանի 2017 թվականի մայիսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Վերաքննիչ դատարանի որոշումը մասնակիորեն բեկանվել է և գործը՝ հակընդդեմ հայցի մասով, ուղարկվել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մադաթյանը 2017 թվականի օգոստոսի 30-ին ներկայացրել է հակընդդեմ հայց՝ պատասխանողներ Կայծեր և Անահիտ Բաբայաններից 1.360.000 ՀՀ դրամի չափով դրամական միջոցներ գանձելու պահանջի մասին:

Գործի նոր քննության արդյունքում Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի մարտի 06-ի վճռով սկզբնական հայցը բավարարվել է մասնակիորեն, իսկ հակընդդեմ հայցը՝ մերժվել:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել պատասխանող /հակընդդեմ հայցվոր/ Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

Վերաքննիչ դատարանի /դատավորներ՝ Կ.Մադյան, Հ.Աբրահամյան, Հ.Գրիգորյան/ 2018 թվականի մայիսի 15-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի մարտի 06-ի վճիռը բեկանվել է ու գործն ուղարկվել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր՝ Լ.Աղաբեկյան/ 2018 թվականի հունիսի 21-ի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության:

Թիվ ԸԻԴ/1601/02/13 քաղաքացիական գործով կատարողական թերթը դուրս է գրվել 2017 թվականի հուլիսի 28-ին:

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության Մարտունի-Հաղրութ բաժանմունքի կողմից 15.08.2017թ. հարուցվել է թիվ 5-5220/17 կատարողական վարույթը:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր Կ.Մելքումյան/ 2017 թվականի նոյեմբերի 27-ի որոշմամբ պարտապաններ Կայծեր և Անահիտ Բաբայանների ու նրանց ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանի միջնորդությունը բավարարվել է, թիվ ԸԲԴ/1601/02/13 քաղաքացիական գործով Գերագույն դատարանի 2017 թվականի մայիսի 25-ին կայացրած որոշման կատարումը հետաձգվել է մինչև 2018 թվականի սեպտեմբերի 25-ը:

Պարտապաններ Կայծեր և Անահիտ Բաբայանները ու նրանց ներկայացուցիչ Ռաֆիկ Ավանեսյանը 06.08.2018թ. դիմում-միջնորդություն են ներկայացրել Առաջին ատյանի դատարան՝ մինչև թիվ ԸԲԴ/1601/02/13 քաղաքացիական գործով հակընդդեմ հայցի քննարկումը ու վերջնական դատական ակտի կայացումը նույն գործով կայացված՝ առանձնատնից և տնամերձ հողամասից վտարելու մասին վճռի կատարումը կասեցնելու մասին:

Առաջին ատյանի դատարանի /դատավոր Լ.Աղաբեկյան/ 2018 թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է, թիվ ԸԲԴ/1601/02/13 քաղաքացիական գործով թիվ 5-5220/17 կատարողական վարույթը կասեցվել է մինչև վերջնական դատական ակտի կայացումը:

Վերաքննիչ դատարանը, քննարկելով վերը նշված որոշման դեմ պահանջատիրոջ՝ Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մաղաթյանի բերած վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու հարցը, իր՝ 2018 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը վերադարձրել է՝ այն բողոքարկման ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2018 թվականի սեպտեմբերի 26-ին վճռաբեկ բողոք է բերել պահանջատեր Լ.Վարդանյանի ներկայացուցիչ Ա.Մաղաթյանը, խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտման հիմքերով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 129-րդ, 130-րդ և 223-րդ հոդվածների պահանջները, պետք է կիրառեր նույն օրենսգրքի 224-րդ հոդվածի պահանջները:

Վկայակոչելով նշված նորմերի օրենսդրական շարադրանքը, բողոքաբերը նշում է, որ չնայած պատասխանողներին վտարելու մասին հայցվորի պահանջը բավարարվել է 27.12.2016թ. վճռով, սակայն այն մինչև հիմա ի կատար չի ածվել, քանի որ Բաբայանների ներկայացուցիչ Ռ.Ավանեսյանը

միջնորդությամբ խնդրել է հետաձգել սույն գործով Գերագույն դատարանի կողմից կայացված առ 25.05.2017թ. որոշման կատարումը, որն Առաջին ատյանի դատարանի 27.11.2017թ. որոշմամբ բավարարվել է և որոշման կատարումը հետաձգվել է մինչև 2018թ. սեպտեմբեր ամիսը: Փոխանակ դատարանի որոշման կատարումը հետաձգելու մասին որոշմամբ սահմանված ժամկետը լրանալուն պես պատասխանողները կամավոր ազատեին առանձնատունը, նրանք 06.08.2018թ. դիմել են մեկ այլ միջնորդությամբ՝ այս անգամ արդեն կատարողական վարույթն անորոշ ժամկետով, այսինքն մինչև գործով վերջնական դատական ակտ կայացնելը կասեցնելու մասին, որն էլ դատարանի կողմից բավարարվել է՝ առանց որևէ իրավական հիմնավորման: Բացի այդ, դատարանը նշել է, որ այն բողոքարկման ենթակա չէ: Վերաքննիչ դատարանն իր վերաքննիչ բողոքը վարույթ չի ընդունել այն հիմքով, որ կատարողական վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը խաթարում է արդարադատության բուն էությունը, և որ ամենագլխավորն է, ոտնահարում է պահանջատեր Լ.Վարդանյանի իրավունքները, որը, լինելով անշարժ գույքի սեփականատեր, արդեն շուրջ 10 տարի է պայքարում է օրինական դաշտում արդարության հասնելու համար:

Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշման մեջ որպես իրավական հիմնավորում մատնանշել է միայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ, 129-րդ և 130-րդ հոդվածների պահանջները, ինչպես նաև անդրադարձել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքին և ԼՂՀ դատական օրենսգրքին՝ առանց որևէ կոնկրետ իրավական նորմի մատնանշման, և եզրակացրել, որ կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը չի հանդիսանում անմիջական բողոքարկման օբյեկտ, նշելով, որ գործին մասնակցող անձը նման որոշումը կարող է բողոքարկել դատարանի վճռի դեմ բերված բողոքում, մինչդեռ դատարանն անտեսել է, որ վերջնական դատական ակտի բողոքարկման ժամանակ սույն հարցի քննարկումը կդառնա իմաստագուրկ: Հետևաբար, բողոքաբերի պնդմամբ՝ հետադարձ բողոքարկման կարգը սույն որոշման դեմ կիրառելի չէ, և գտնում է, որ սույն դատական ակտի նկատմամբ պետք է կիրառվի բողոքարկման անմիջական կարգ:

Ըստ բողոքի՝ Առաջին ատյանի դատարանի 30.08.2018թ. որոշումը բողոքարկվել է երկու հիմքով՝ առաջին հիմքն այն է, որ նշված որոշումը ենթակա է բողոքարկման, և դատարանը, սահմանափակելով պահանջատիրոջ իրավունքները և նրան զրկելով դատական ակտին համաձայն չլինելու պարագայում վերադատության կարգով բողոքարկելու իրավունքից, դրանով իսկ խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 6-րդ կետերի պահանջները: Իսկ վերաքննիչ բողոքի երկրորդ իրավական հիմքն այն է, որ որոշումն անհիմն ու անօրեն է, քանի որ

այն ընդունվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի պահանջների խախտմամբ:

Բողոքաբերի կարծիքով՝ Վերաքննիչ դատարանը պարտավոր է եղել բողոքը վարույթ ընդունել և դիրքորոշում արտահայտել այն առումով, թե որոշումը ենթակա է բողոքարկման, թե ոչ և միայն դրանից հետո գնահատականի արժանացներ որոշման օրինականության հարցը, դրանով խախտվել են պահանջատիրոջ դատական ակտի բողոքարկման և սեփականության իրավունքները:

Անհիմն է Վերաքննիչ դատարանի նշումը, որ բողոքարկվող որոշման մեջ բողոքարկման համար հնարավորություն և ժամկետ սահմանված չէ:

Վերաքննիչ դատարանն իր որոշման հիմքում դրել է այն, որ ո՛չ ԼՂՀ քաղաքացիական դատավարության, ո՛չ ԼՂՀ դատական օրենսգրքերով, ո՛չ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքով նշված որոշման անմիջական բողոքարկման կարգ և ժամկետ սահմանված չէ, սակայն անտեսել է այն հանգամանքը, որ վերը նշված օրենքներում առաջին ատյանի դատարանի կողմից կատարողական վարույթը կասեցնելու կարգ ամրագրված չէ և միակ նորմը, որում նշված է վարույթի կասեցման մասին, դա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի «ե» կետն է, այլ ոչ թե «գ» կետը, ինչպես հիշատակված է բողոքարկվող որոշման մեջ: Նշված օրենքի 22-րդ հոդվածը հստակ սահմանել է կատարողական վարույթի հետաձգման կամ տարաժամկետման, ինչպես նաև կատարման եղանակի և կարգի փոփոխման կարգը, իսկ դատարանի կողմից վարույթի կասեցման որոշման կայացման կարգի մասին հարցն ընդհանրապես օրենսդրությամբ ամրագրված չէ: Հետևաբար, եթե կայացման կարգն օրենքով ամրագրված չէ, ապա դրա բողոքարկման կարգը նույնպես դուրս է մնում դատարանի կողմից հիշատակված վերոհիշյալ օրենքների տեսադաշտից:

Դատարանը չի անդրադարձել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ մասի 4-րդ և 6-րդ կետերի պահանջներին, որոնք հստակ նշված էին բերված վերաքննիչ բողոքում:

Բողոքաբերն անհիմն է համարում Վերաքննիչ դատարանի եզրահանգումն այն մասին, որ օրենքների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ անմիջական բողոքարկման կարգով վերաքննության կարգով կարող են բողոքարկվել գործն ըստ էության չլուծող դատական ակտերը, որոնց թվում է դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու, դրա կատարման եղանակն ու կարգը փոփոխելու մասին դիմումի քննության արդյունքում կայացրած որոշումը:

Այդ կապակցությամբ բողոքաբերը նշում է, թե ինչպես կարող է օրենսդիրը թույլատրել նշված որոշումների բողոքարկում, որոնք պարունակում են կոնկրետ ժամկետ, իսկ կասեցման մասին որոշումը՝ ոչ, որը ժամանակի առումով կրում է անորոշ բնույթ:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերը հիմնավորել է գործի ելքի վրա ազդեցություն ունեցող նյութական և դատավարական իրավունքների նորմերի խախտումների առկայության և Գերագույն դատարանի կայացվելիք որոշման օրենքի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու ու իրավունքի զարգացմանը նպաստելու հանգամանքներով:

Վերագրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր: Ըստ այդմ, Գերագույն դատարանի խնդիրն է պատասխանել հետևյալ իրավական հարցադրմանը՝ ենթակա է արդյոք բողոքարկման կատարողական վարույթը կասեցնելու վերաբերյալ դատարանի միջանկյալ դատական ակտը:

Նշված հարցադրմանը պատասխանելու համար, Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում կատարել մի շարք իրավանորմերի համակարգված վերլուծություն: Այսպես՝

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձինք իրավունք ունեն բողոքարկել դատական ակտերը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք կարող է բերվել միայն նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենսդրի սահմանած նման իրավակարգավորումը վերաբերում է ոչ թե միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությանն ընդհանրապես, այլ բողոքարկման կարգին: Օրենսդիրը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում սահմանելով տվյալ միջանկյալ ակտի անմիջական բողոքարկման հնարավորություն՝ չի բացառում միջանկյալ դատական ակտերի բողոքարկելիությունը գործն ըստ էության լուծող դատական ակտերի բողոքարկման շրջանակներում: Այսինքն՝ օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու հիմնական կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական

ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում», և միջանկյալ դատական ակտի անմիջական բողոքարկում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման նեղ շրջանակ սահմանելով օրենսդիրը նպատակ է ունեցել բացառել միջամտությունը ստորադաս դատարանի կողմից արդարադատության իրականացմանը: Սակայն մյուս կողմից՝ առանձին միջանկյալ դատական ակտերի անմիջական բողոքարկման հնարավորության իսպառ բացառումը կարող է հանգեցնել դատական պաշտպանության, գործի ողջամիտ ժամկետում արդարացի քննության սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքների խախտման: Որպես կանոն, օրենսդիրը բողոքարկելի է համարում այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացման ընթացքը, այն է՝ հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու, գործի վարույթը կասեցնելու մասին որոշումները: Իրենց հերթին, բողոքարկման ոչ ենթակա ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը:

Հիմք ընդունելով վերոհիշյալը և հաշվի առնելով կատարողական վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու շրջանակներում վիճարկելու օբյեկտիվ անհնարինությունը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ այս որոշման անմիջական բողոքարկման կարգը կարելի է իրականացնել իրավունքի անալոգիա կիրառելով: Այսպես՝

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածում ամրագրված իրավադրույթը համապարտադիր ուժ է տալիս օրինական ուժ ստացած բոլոր ակտերին՝ նշելով սուբյեկտների այն շրջանակը, ում վրա տարածվում է օրինական ուժ ստացած դատական ակտի գործողությունը, ինչպես նաև այն տարածքը, որտեղ պարտադիր կատարման է ենթակա օրինական ուժ ստացած դատական ակտը: Սուբյեկտների նկատմամբ դատական ակտերի պարտադիրության աստիճանի առումով հարկ է ընդգծել, որ այն առաջնային նշանակություն ունի վիճելի հարաբերության կողմերի համար, քանի որ դատական ակտով նախ և առաջ վեճի կողմերի համար են սահմանվում որոշակի գործողություններ կատարելու կամ կատարումից ձեռնպահ մնալու պարտադիր պահանջներ:

Նշված պահանջների կատարման բացակայության փաստը պահանջատեր հանդիսացող կողմին հնարավորություն է տալիս հարկադիր կատարման միջոցով հասնել իր պահանջի փաստացի բավարարմանը կամ, որ նույնն է՝ պարտադրել մյուս կողմին կատարելու օրինական ուժ ստացած դատական ակտի պահանջները: Դատական ակտի հարկադիր կատարման կառուցակարգն ամբողջական է դարձնում դատավարությունը և ապահովում է շահագրգիռ անձի պահանջների բավարարումը: Այս առումով Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում հիշատակել Մարդու իրավունքների եվրոպական դա-

տարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) ամրագրած հետևյալ իրավական դիրքորոշումը. «6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդար դատաքննության իրավունքը կդառնար երևակայական իրավունք, եթե պետության իրավական համակարգը թույլ տար, որ վերջնական և պարտադիր ուժ ունեցող դատական որոշումները մնային անկատար: Դժվար կլինեք պատկերացնել, որ 6-րդ հոդվածը, մանրամասն նկարագրելով կողմերին տրամադրվող դատավարական երաշխիքները (արդար, հրապարակային և արագ դատաքննություն), չպաշտպաներ դատական որոշումների կատարումը: Դատական ակտերի կատարման նկատմամբ 6-րդ հոդվածի գործողության բացառումը կհանգեցնեք իրավունքի գերակայության սկզբունքի հետ անհամատեղելի իրավիճակների: Ուստի, ցանկացած դատարանի կողմից կայացված որոշման կատարում պետք է դիտվի որպես «դատաքննության» բաղկացուցիչ մաս՝ 6-րդ հոդվածի իմաստով» (տե՛ս, օրինակ՝ *Hornsby v Greece* 18357/91 գանգատով ՄԻԵԴ 1997 թվականի մարտի 19-ի վճիռը):

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ հարկադիր կատարողը պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը, եթե՝ դատարանը որոշում է կայացրել կատարողական վարույթը կասեցնելու մասին:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված իրավանորմն ամրագրել է կատարողական վարույթն իրականացնող մարմնի ինպերատիվ պարտականությունը՝ կասեցնել կատարողական վարույթն այն դեպքում, երբ դատարանը դրա մասին որոշում է կայացրել: Ինչ վերաբերում է դատարանի կողմից կատարողական վարույթը կասեցնելու հիմքերին և ընթացակարգին, ապա ոչ միայն այս հոդվածը, այլ՝ նշված օրենքն ընդհանրապես այդ մասին որևէ կարգավորում չունի: Այսինքն, դատարանը՝ նմանատիպ միջնորդություն քննելու բոլոր դեպքերում պետք է ղեկավարվի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով: Վերջինս սահմանել է, որ վիճելի հարաբերությունը կարգավորող օրենքի կամ այլ իրավական ակտի բացակայության դեպքում դատարանը կիրառում է նույնանման հարաբերություններ կարգավորող օրենքի նորմերը (օրենքի անալոգիա): Նման նորմերի բացակայության դեպքում դատարանը վեճը լուծում է՝ ելնելով իրավունքի սկզբունքներից (իրավունքի անալոգիա):

Այս համատեքստում դիտարկելով կատարողական վարույթը կասեցնելու վերաբերյալ դատարանի որոշումը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ այն, ըստ էության, որոշակի ժամանակահատվածով դադարեցնում է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի կատարումը: Այս առումով այն որոշակի նմանություններ ունի դատական ակտի կատարումը հետաձգելու կամ տարաժամկետելու վերաբերյալ որոշման հետ այն առանցքային տարբերությամբ, որ վերջիններս կարող են կիրառվել միայն, եթե պարտապանը պահանջատիրոջը պատրաստ է տրամադրելու պահանջին համարժեք ապահովում, և ակնհայտ է, որ բացակայում է հարկադիր կատարման անհրաժեշտությունը, քանի որ ողջամիտ ժամկետում դատական ակտը կկատարվի կամովին: Վերջիններիս վերաբերյալ օրենսդիրը նախատեսել է և՛

որոշումը կայացնելու հստակ ընթացակարգ, և՛ այն բողոքարկելու հնարավորություն: Ընդ որում, նույնիսկ նման որոշման կայացումը դատարանի կողմից չի կասեցնում կատարողական վարույթը: Այսինքն, կատարողական վարույթը կասեցնելու վերաբերյալ դատարանի որոշումը պետք է համապատասխանի ավելի լայն չափանիշների, որոնք կբացառեն կատարողական վարույթի մասնակիցների իրավունքների խախտումները, իսկ մինչև քաղաքացիական գործի քննության ավարտը կասեցված կատարողական վարույթի պարագայում՝ տվյալ միջանկյալ դատական ակտի դեմ պաշտպանության միակ միջոցը դրա անմիջականորեն բողոքարկման հնարավորությունն է:

Նշվածների հաշվառմամբ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը սահմանափակել է բողոք բերած անձի դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքները, ինչն էլ, իր հերթին, հիմք է հանդիսանում ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով վճռաբեկ բողոքը բավարարելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ վերաքննիչ դատարանի՝ բողոքը վերադարձնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճռաբեկության կարգով՝ որոշումը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Որոշումը Գերագույն դատարանի կողմից վերացվելու դեպքում բողոքը համարվում է վերաքննիչ դատարանում ընդունված՝ սկզբնական ներկայացնելու օրը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Վերացնել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի՝ «Վերաքննիչ բողոքը վերադարձնելու մասին» որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Ն.ՆԱԲԻՄԱՆՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱՉԱՏԻՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

մասնավորապես, վերացնելու անձրևաջրերի հոսքը դեպի Հայցվորին սեփականության իրավունքով պատկանող տարածք:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ հայցադիմումը վարույթ է ընդունել և հարուցել սույն քաղաքացիական գործը:

Առաջին ատյանի դատարանի 2017 թվականի մայիսի 22-ի որոշմամբ Ստեփանակերտի քաղաքային համայնքը գործով ներգրավվել է որպես երրորդ անձ՝ Պատասխանողի կողմում:

Առաջին ատյանի դատարանը 2017 թվականի հունիսի 08-ի որոշմամբ նշանակել է շինարարատեխնիկական փորձաքննություն և նույն օրը կայացրած մեկ այլ որոշմամբ կասեցրել գործի վարույթը:

Առաջին ատյանի դատարանը 2018 թվականի ապրիլի 20-ի որոշմամբ վերսկսել է գործի վարույթը և գործը նշանակել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հունիսի 27-ի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ 2018 թվականի հուլիսի 12-ին վերաքննիչ բողոք է բերել Պատասխանողը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2018 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի օգոստոսի 31-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է, Առաջին ատյանի դատարանի 2018 թվականի հունիսի 27-ի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել:

Նշված որոշման դեմ 2018 թվականի սեպտեմբերի 24-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Հայցվորի ներկայացուցիչը՝ խնդրելով բեկանել ԱՀ վերաքննիչ դատարանի 2018 թվականի օգոստոսի 31-ի որոշումը՝ օրինական ուժ տալով Առաջին ատյանի դատարանի վճռին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքի հեղինակի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի /այսուհետ, նաև՝ Կոնվենցիա/ 6-րդ հոդվածի, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ, 44-րդ, 49-րդ հոդվածների պահանջները:

Նման դիրքորոշումը բողոքաբերը հիմնավորում է այն պատճառաբանությամբ, որ Վերաքննիչ դատարանը բեկանելով և փոփոխելով Դատարանի վճիռը, գործում գտնվող ապացույցների բազմակողմանի հետազոտում չի կատարել և սխալ է գնահատել ապացույցները:

Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, թե Հայցվորը չի ապացուցել Մ.Գոշ 6ա հասցեում գտնվող և անձրևաջրերի պատճառով վնաս կրող անշարժ գույքի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող լինելու մասին սույն վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, անհիմն է, քանի որ սույն բողոքին կցված թիվ 103394 և գործում գտնվող թիվ 094519 սեփականության իրավունքի գրանցման վկայականների լուսապատճեններով ապացուցված է Հայցվորի սեփականության իրավունքը նշված գույքի նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն կարևոր հանգամանքը, որ Պատասխանողը չի ներկայացրել Հայցվորի գույքին պատճառված վնասում իր գույքի օգտագործմամբ մեղքի բացակայության վերաբերյալ որևէ ապացույց, ավելին՝ չի ներկայացրել իր սեփականությունը հանդիսացող շինության նախագծահաշվարկային փաստաթղթերը, որից պարզ կդառնար, թե պահպանված են արդյոք այդ շինության կառուցման շինարարական նորմերը, թե ոչ:

Վերաքննիչ դատարանը սխալ գնահատելով փորձագետի եզրակացությունը, որով հիմնավորվում է, որ Հայցվորի գույքը վնասվում է Պատասխանողի գույքից հոսող անձրևաջրերի պատճառով, պատճառաբանել է, թե քաղաքաշինության նախարարի պատասխանից հետևում է, որ անձրևաջրերը ինքնահոս հոսում են շրջակա բազմաբնակարան շենքերից և բակերից, որից էլ կարող է վնասվել Հայցվորի շինությունը:

Նշված պատճառաբանությամբ, բողոքաբերը խնդրել է բեկանել վիճարկվող որոշումը և օրինական ուժ տալ Առաջին աստիճանի դատարանի վճռին:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 094519՝ տրված 13.05.2008 թվականին, վկայականի լուսապատճենի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Մ. Գոշ փողոցի թիվ 6ա հասցեում գտնվող սրճարանի նկատմամբ գրանցված է «Աղվորիկ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը /գ.թ.9-11/:

2/ Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 138436՝ տրված 02.10.2013 թվականին, վկայականի լուսապատճենի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների պող. թիվ 33/16 հասցեում գտնվող հասարակական նշանակության օբյեկտի նկատմամբ գրանցված է «Շահ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը: /գ.թ.77-78/:

3/ Գործում գտնվող «ԼՂՀ դատական փորձաքննությունների լաբորատորիա» ՊՈԱԿ փորձագետ Ս.Ա.Հայրապետյանի թիվ 20513/17 եզրակացության «Հետազոտություններ» բաժնի 4-րդ էջի վերջին պարբերության համաձայն.

«Շահ» ՍՊԸ անվամբ Ազատամարտիկների 33/16 հասցեով անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 138436 վկայականի (միջնորդությամբ տրամադրված) լրացուցիչ նշումներ և տեղեկություններ մատուցելու նշված է, որ սույն հասարակական նշանակության 1740.68 քառ/մ մակերեսով օբյեկտի ավարտվածության աստիճանը 80-100% է: Հարկ է նշել, որ միջնորդությամբ պահանջվել է փորձաքննությանը տրամադրել նաև նշված օբյեկտի նախագծանախահաշվային փաստաթղթերը, ինչը սակայն փորձաքննությանը չի տրամադրվել, ուստի սույն փորձաքննությամբ հնարավոր չէ որոշել, թե ինչ աշխատանքներ չեն կատարվել, որոնք որ նախատեսված են նախագծանախահաշվային փաստաթղթերով և ինչ աշխատանքներ են ընդունվել հանձնման-ընդունման ակտերով: Տեղագնությամբ պարզվեց նաև, որ «ՌԵԶՈՆ» խանութի տանիքածածկը իրականացված է կենտրոնացված ջրահեռացմամբ՝ անձրևաջրերը հավաքվում են և թվով հինգ հատ ջրհորդանների միջոցով իջնում և թափվում են ոչ թե սալվածքին /յուրաքանչյուրն իր ուղղությամբ/, այլ թափվում են խանութի արտաքին պատի ամբողջ երկարությամբ անցկացված կոյուղու խողովակագիծ, որն էլ թափվում է «Աղվորիկ» ՍՊԸ-ին պատկանող օբյեկտի հարակից տարածք:» /գ.թ.75/:

4/ Փորձագետի թիվ 20513/17 եզրակացության հետազոտություններ բաժնի համաձայն՝ «1. «Աղվորիկ» ՍՊԸ-ին պատկանող օբյեկտը «ՇԱՀ» ՍՊԸ-ին պատկանող «ՌԵԶՈՆ» խանութի հարակից տարածքների նկատմամբ ունի ավելի ցածր նիշ, ինչի պատճառով էլ անձրևաջրերը հոսում են ավելի ցածր հարթություն, այսինքն «Աղվորիկ» ՍՊԸ-ին պատկանող օբյեկտի տարածք, որտեղ նախատեսված չէ կենտրոնացված ջրահեռացման համակարգ: 2. «ՌԵԶՈՆ» խանութի տանիքածածկը իրականացված է կենտրոնացված ջրահեռացմամբ՝ անձրևաջրերը հավաքվելով թվով հինգ հատ ջրհորդանների միջոցով իջնում և թափվում են ոչ թե սալվածքին /յուրաքանչյուրն իր ուղղությամբ/, այլ թափվում են խանութի արտաքին պատի ամբողջ երկարությամբ անցկացված կոյուղու խողովակագիծ, որն էլ թափվում է «Աղվորիկ» ՍՊԸ-ին պատկանող օբյեկտի հարակից տարածք, սակայն «ՌԵԶՈՆ» խանութի նախագծանախահաշվային փաստաթղթերը փորձաքննությանը չտրամադրման պատճառով, սույն փորձաքննությամբ հնարավոր չէ որոշել, թե «ՌԵԶՈՆ» խանութի շինարարական աշխատանքները իրականացված են ըստ հաստատված նախագծի թե ոչ և նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված ինչ աշխատանքներ են ընդունվել հանձնման-ընդունման ակտերով /օբյեկտի ավարտվածության աստիճանը ըստ վկայականի 80-100% է/: 3. Պատասխանողի տարածքից հոսող անձրևաջրերի շարունակական ներգործությունից հնարավոր է «Աղվորիկ» ՍՊԸ-ին պատկանող շինություններին վնասվածքներ հասցվեն /հիմքերի թուլացում և այլն/, սակայն դրանով կխաչընդոսովի «Աղվորիկ» ՍՊԸ-ի սեփականության իրավունքի իրացումը, թե ոչ, փորձագետ շինարարատեխնիկի իրավասություններից դուրս է և ենթակա է իրավական գնահատման» /գ.թ.75/:

5/ Անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 103394՝ տրված 11.08.2010թ., վկայականի լուսապատճենի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Մ.Գոշ փողոցի թիվ 6ա հասցեում գտնվող, 18,23 քմ մակերեսով պահեստի նկատմամբ գրանցված է «Ադվոքիկ» ՍՊ ընկերության սեփականության իրավունքը, որպես իրավունքի գրանցման հիմք է նշված Ստեփանակերտի քաղաքապետարանի 30.06.2010թ. թիվ 1183Ա որոշումը և 06.07.2010թ. թիվ 165 առուվաճառքի պայմանագիրը:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկության կարգով վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն իրավական խնդրին, թե այն դեպքում, երբ պատասխանողի գործողությունները հիմնված են չվիճարկվող վարչական ակտի վրա, արդյոք նեգատոր հայցը ենթակա է բավարարման:

Նշվածի համատեքստում, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նեգատոր հայցի իրավական կարգավորման հարցին:

ԱՀ Սահմանադրության 10-րդ հոդված 1-ին մասը հռչակում է. Արցախի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ԱՀ Սահմանադրության 60-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները կանխելով:

Նույն օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված ու պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:

Վկայակոչված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն օժտված լինելով սեփականատիրական լիազորություններով՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու, օգտագործելու իր սեփականությունը, իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքի ամեն մի խախտում, որը կապված է այդ իրավունքների իրականացման հետ: Փաստորեն, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը սեփականատիրոջը պաշտպանություն է տրամադրում նաև տիրապետումից զրկվելու հետ չկապված գործողություններից: Նման հայցը կոչվում է նեգատոր և ուղղված է գույքի օգտագործման ու տիրապետման պաշտպանությանը: Այսինքն, նեգատոր հայցը նույնպես սեփականության իրավունքի պաշտպանության գույքային իրավական եղանակ է և ներկայացվում է այն դեպքում, երբ սեփականատերը և երրորդ անձը վեճի առարկա գույքի առնչությամբ միմյանց հետ չեն գտնվում պարտավորական կամ այլ հարաբերական իրավահարաբերություններում:

Նման հայց ներկայացնելու իրավունքն օրենսդիրը վերապահում է ինչպես գույքի սեփականատիրոջը, այնպես էլ՝ տիտղոսավոր տիրապետողին, որոնք տիրապետում են գույքը, սակայն զրկված են գույքից օգտվելու և այն տնօրինելու հնարավորություններից: Որպես պատասխանող հանդես է գալիս այն անձը, որն իր հակաօրինական վարքագծով ստեղծել է խոչընդոտներ, որոնք խանգարում են գույքի սեփականատիրոջը, կամ օրինական տիրապետողին՝ բնականոն ձևով իրացնելու իրենց պատկանող իրավունքը:

Նշված մեկնաբանությունների ընդհանրացման արդյունքում Գերագույն դատարանը հանգում է այն եզրակացության, որ նեգատոր հայցի ներկայացման դեպքում միաժամանակ պետք է առկա լինեն հետևյալ երկու պայմանները. 1/հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող, 2/հայցի հարուցման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին օգտագործել և /կամ/ տնօրինել գույքը:

Վերոնշյալ պայմանները որպես փաստ ներառվում են նեգատոր հայցով հարուցված գործերի ապացուցման առարկայում: Այդուհանդերձ, դրանք ապացուցման առարկան կազմող միակ փաստերը չեն, ապացուցման է ենթակա նաև երրորդ փաստը, այն է՝ գույքի օգտագործմանը և /կամ/ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության իրավական, օրինական լինելու փաստը: Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ նեգատոր հայցերի դեպքում դատավարական բեռը բաշխելիս հայցվորն է կրում գույքի սեփականատերը կամ օրինական տիրապետողը լինելու և այդ գույքի օգտագործմանը և /կամ/ տիրապետմանը խոչընդոտող գործողության կամ անգործության փաստերն ապացուցելու պարտականությունը: Ինչ վերաբերում է երրորդ փաստին՝ գործողությունների կամ անգործության հակաիրավական բնույթին, ապա հայց ներկայացնելու

պահին վերջիններիս առնչությամբ գործում է հակաիրավական լինելու կանխավարկածը, քանի դեռ պատասխանողը չի ապացուցել հակառակը: Հետևաբար, նշված փաստի ապացուցման դատավարական բեռը կրում է պատասխանողը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հայցվորը դիմելով դատարան պահանջել է Պատասխանողին պարտավորեցնել վերացնելու տիրապետումից զրկելու հետ չկապված Հայցվորի սեփականության իրավունքի խախտումները՝ վերացնելու Պատասխանողին պատկանող անշարժ գույքի տարածքից անձրևաջրերի հոսքը դեպի Հայցվորի շինություն, պատճառաբանելով, որ Պատասխանողի սեփականությունը հանդիսացող անշարժ գույքը կառուցված է քաղաքաշինության գործող նորմերի խախտումներով՝ հաշվի չեն առնված անձրևաջրերի հոսքի և երրորդ անձանց վնաս չպատճառելու հանգամանքները: Առաջին ատյանի դատարանը հայցի բավարարման հիմքում դրել է այն հանգամանքը, որ գործում առկա ապացույցներով հաստատվում է ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածի հիմքով հայցի հիմնավորված լինելը:

Վերաքննիչ դատարանը Պատասխանողի բողոքը բավարարել և հայցադիմումը մերժել է երկու պատճառաբանությամբ, նախ, Հայցվոր կողմից Ստեփանակերտ քաղաքի Մ. Գոշ 6ա հասցեում գտնվող անշարժ գույքի ամբողջի նկատմամբ սեփականության իրավունք ունենալու կարևոր փաստը ապացուցած չլինելու՝ քանի որ նշված գույքի վերաբերյալ գործում գտնվող թիվ 094519 սեփականության իրավունքի գրանցման մասին վկայականի լուսապատճենի մեջ առկա է 23,92 քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինություն՝ 2.1. համարի տակ, և երկրորդ՝ այն գույքը, որի օգտագործմամբ՝ ըստ Հայցվորի, վնաս է պատճառվում իր գույքին, ուժի մեջ գտնվող վարչական ակտով, օրինական հիմքով պատկանում է Պատասխանողին, ինչը նշանակում է, որ գործում է Պատասխանողին պատկանող անշարժ գույքը քաղաքաշինական նորմերին համապատասխան լինելու կանխավարկածը:

Վերոնշյալ իրավական վերլուծությունները հիմք ընդունելով և սույն գործի փաստերը համադրելով, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Հայցվորի կողմից վճռաբեկ բողոքին կցված, 2010թ. օգոստոսի 11-ին տրված թիվ 103394 սեփականության իրավունքի գրանցման վկայականի լուսապատճենի գնությունից հետևում է, որ Ստեփանակերտ քաղաքի Մ. Գոշ 6ա հասցեում 0,0024 հա հողատարածքի վրա գտնվող արտադրական նշանակության 18,23 քմ մակերեսով պահեստի նկատմամբ 06.03.2010թ. թիվ 165 առուվաճառքի պայմանագրի և Ստեփանակերտի քաղաքապետի 2010թ. հունիսի 30-ի թիվ 1183 Ա որոշման հիման վրա գրանցված է Հայցվորի սեփականության իրավունքը, ինչն էլ հիմք է տալիս Գերագույն դատարանին փաստելու, որ սույն գործով Հայցվորն ապացուցել է գույքի սեփականատեր լինելու կարևոր փաստը:

Նշված փաստից հետևում է, որ Վերաքննիչ դատարանի 1-ին պատճառաբանությունը՝ Հայցվորի կողմից գույքի օրինական տիրապետող կամ սեփականատեր չլինելու մասին, անհիմն է, ուստի վճռաբեկ բողոքն այս հիմքով՝ հիմնավոր:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ սույն գործով Հայցվորը պարտավոր չէ ապացուցել Պատասխանողի գործողությունների հակաօրինականությունը, ավելին, Պատասխանողն ինքն է պարտավոր ապացուցել իր վարքագծի օրինական լինելը:

Գործում գտնվող, 2013 թվականի հոկտեմբերի 02-ին տրված թիվ 138436 սեփականության իրավունքի գրանցման վկայականի լուսապատճենի գնումությունից հետևում է, որ Ստեփանակերտ քաղաքի Ազատամարտիկների 33/16 հասցեում գտնվող հասարակական նշանակության օբյեկտի նկատմամբ գրանցված է Պատասխանողի սեփականության իրավունքը, ինչն էլ հիմք է տալիս Գերագույն դատարանին փաստելու, որ Պատասխանողի գործողությունները՝ որոնք ուղղված են նշված գույքի օգտագործմանը, օրինական են, քանի որ հիմնված են օրինական ուժի մեջ գտնվող վարչական ակտի վրա:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ նեգատոր հայցով սեփականատիրոջ իրավունքները ենթակա են պաշտպանության այն դեպքում, երբ պատասխանողի գործողություններն օրինական չեն, իսկ այն դեպքում, երբ պատասխանողի գործողությունները հիմնված են վարչական ակտի վրա, ապա իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների վարչական ակտը վիճարկելու եղանակով:

Անդրադառնալով բողոքի այն փաստարկին, թե Պատասխանողը չի ապացուցել իր մեղքի բացակայությունը Հայցվորին վնաս պատճառելու մեջ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ նեգատոր հայցի բավարարումը կախված չէ սեփականատիրոջ իրավունքների իրականացման համար խոչընդոտներ ստեղծող երրորդ անձի մեղավորությունից: Եթե նման գործողությունները վնաս են պատճառել սեփականատիրոջը կամ տիրոջուսակիր /օրինական/ տիրապետողին, ապա նրանք կարող են ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1061-րդ հոդվածի համաձայն պահանջել երրորդ անձանցից (նրանց մեղավորության դեպքում) հատուցելու իրենց պատճառված վնասները:

Հիմք ընդունելով նշվածները՝ Գերագույն դատարանն արձանագրում է, որ Հայցվորի սեփականության իրավունքի ներքո գտնվող անշարժ գույքի գնահատման առումով Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտում: Իր հերթին, Պատասխանողի սեփականության իրավունքի առկայության պայմաններում նեգատոր հայցի բավարարման անհնարինության վերաբերյալ եզրահանգումը լիովին իրավաչափ է, որի պայմաններում հայցը մերժելու մասին Առաջին ատյանի դատարանի վճիռն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշումը հանդիսանում է գործը ճիշտ լուծող դատական ակտ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական իրավունքի նորմերի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել գործի սխալ լուծման: Դատարանի՝ ըստ էության ճիշտ վճիռը չի կարող բեկանվել միայն ձևական նկատառումներով:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է մերժել և որոշումը թողնել օրինական ուժի մեջ, ինչը բխում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներից, համաձայն որոնց՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով Գերագույն դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները ու եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գննելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Անդրադառնալով դատական ծախսերի բաշխման հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Քանի որ սույն գործով վճռաբեկ բողոքը մերժվում է, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Աղվորիկ» ՍՊ ընկերության տնօրեն Վ.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը մերժել: Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2018 թվականի օգոստոսի 31-ի որոշումը թողնել օրինական ուժի մեջ՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դա-
լիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ